

ՀՀ պետական պարտատոմսերով գործառնություններ և դեպո հաշվի սպասարկում

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ	ՍԱԿԱԳՆԵՐ
Դեպո հաշվի բացում	1,000 ՀՀ դրամ
Առաջնային տեղաբաշխման աճուրդից Ներդրողի հանձնարարությամբ ՀՀ Պետական Պարտատոմսերի ձեռք բերում	Հայտի բավարարված մասի գործարքի գնի 0.03%
ՀՀ Պետական Պարտատոմսերի հետգնման աճուրդներին Ներդրողի հանձնարարությամբ ՀՀ Պետական Պարտատոմսերի վաճառք	Հայտի բավարարված մասի գործարքի գնի 0.03%
ՀՀ Պետական Պարտատոմսերի հանձնարարականների ներկայացման համար	500 ՀՀ դրամ յուրաքանչյուր հանձնարարականի համար
Հայաստանի ֆոնդային բորսայում Ներդրողի հանձնարարությամբ ՀՀ Պետական Պարտատոմսերի ձեռք բերում կամ վաճառք	Հայտի բավարարված մասի գործարքի գնի 0.03%

1. Սպառողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման և/կամ վաճառքի պատվեր ներկայացնելիս, վերջինս պարտավոր է առնվազն պատվերի կատարման օրվան նախորդող օրվա դրությամբ իր դրամային և/կամ դեպո հաշվին ապահովել պատվերում նշված դրամական և/կամ պարտատոմսերի անվանական արժեքին համապատասխան միջոցները:

2. Հաճախորդներին ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցումն իրականացվում է համապատասխան պայմանագրերի հիման վրա, որոնք սովորաբար կնքվում են մեկ տարի ժամկետով: Ընդ որում կողմերից յուրաքանչյուրն իրավասու է դադարեցնել պայմանագրի գործողությունը՝ իր որոշման մասին 15 օր առաջ գրավոր կերպով ծանուցելով մյուս կողմին: Այն դեպքում, երբ պայմանագրի գործողության ժամկետի օրվան նախորդող 1 ամսվա ընթացքում կողմերից ոչ մեկը գրավոր չի տեղեկացրել մյուս կողմին պայմանագրի երկարաձգման մասին, պայմանագիրը համարվում է երկարաձգված ևս 1 տարով:

3. Կնքված պայմանագրերի դադարեցման դեպքում բանկը պարտավոր է հաճախորդին պատկանող միջոցները վերադարձնել իրեն՝ մեկ բանկային օրվա ընթացքում փոխանցելով դրանք վերջինիս կողմից նշված համապատասխան հաշիվներին: